

րիշտների անօրէնութիւնների վրայ, և Եղիայի, Եսայեայ, Երեմիայի հոգւով և զօրութեամբ մտորում էր ծառայել Եհովային, ինչ եղաւ այդ բոլորը: Յիշողութեան մէջ կարգով անցնում են տարիները տարիների յետեից և որքան ժամանակը առաջ է գնում, այնքան մթնանում է նրա հոգին: Մոռացուած են և մօր խօսքերը և տաճարը և աղօթքը, մոռացուած են խիղճը և մանկական ցնորքները: Քամուց յափշտակուած տերևների նման նրա յիշողութեան մէջ փայլում են տնցեալի պատկերները և իբրև ծանր քար ճնշում նրան, գլուխը խոնարհեցնում է կրճքին: Շարժուեց քարայած սիրտը, յիշեց ամօթահարութեամբ ի կորուստ մասնուած ոյժերը, ամսոսաց անցած և դնացած պատանեկութիւնը, աչքերի վրայ երևացին շերմ արտասուքներ և վտակի նման հոսելով՝ զովացրին մաքսաւորի թալկացած հոգին: Հալեցաւ նրա մէջ չարութիւնն ու ատելութիւնը դէպի մարդիկ, հոգևոր կեղտը լուացուեցաւ արտասուքով: Մաքսաւորը տաճար եկաւ իբրև ծանր մեղաւոր և դուրս եկաւ իբրև Աստուծոյ արքայութեան որդի, «Ճշմարիտ եմ ասում ձեզ, սովորեցնում է Աւետարանը, եթէ չբառնաք և չզղջաք ինչպէս մաքսաւորը, չէք կարող մտնել երկնքի արքայութիւնը»:

Պետավից բարգմ. Գրիգոր Բնից, Ետ-Արեւեսանց.



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ  
 և քեմեր

Նորին Սրբութիւն Ազգիս ծերունազարդ Հայրապետը օրհնում և շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք նոր տարուայ, Քրիստոսի ա, ծննդեան և յայտնութեան ե Նորին Սրբութեան անուանակոչութեան տօներին շտապել էին կատարել իրենց որդիական պարտքը հեռագրական բարեմաղթութիւններով կամ անձամբ՝ այս վշտի ծով ժամանակում:

Օրէնրուրդից Մայր Աթոռ վերադարձաւ 1903 թուին Գալիցիինի հայրենասիրական քաջագործութեանց ժամանակ Կովկասի սահմաններից հեռացրած Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանը:

Նոր տարուայ առթիւ Թիֆլիզում Նորին Սրբութեան այցելեցին կոմսուհի Վարանցով-Դաչկովան իւր որդու հետ, Փոխարքայի օգնականներ՝ Մալաման, Սուլթան կրիմ Գիրէյ, շտաբի կառավարիչ գեներալ Գրեազնովը և այլ պաշտօնական բարձրաստիճան անձինք: Նորին Սրբութիւնը փախայցելութեան գնաց Փոխարքայի մօտ ծննդեան տօներին: Յունվարի 1-ին Մայր Տաճարում կատարուեց Հայրապետական մաղթանք և շնորհաւորական հեռագիր ուղարկուեց Թիֆլիզ Նորին Սրբութեան:

Յունվարի 14-ին, Վեհափառ կաթողիկոսի անուանակոչութեան օրը տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ և մաղթանք Մայր Աթոռի ամբողջ միաբանութեան ներկայութեամբ, որոնց ղգացմունքների թարգման հանդիսանալով տեղապահ Գեր. Տ. Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեանը, շնորհաւորական հեռագիր ուղարկեց Նորին Վեհափառութեան, մաղթելով նրան երկար կեանք ի մխիթարութիւն իւր բազմաշարչար հօտի:

Սինօդի գանձապահ նշանակուեց տ. Համաղասպ վարդապետ Համաղասպեանը:

Աղէքսանդրապոլի յաջորդ նշանակուեց տ. Արսէն վարդապետ Ալտճեանը, իսկ տ. Կիւրեղ վարդապետը հիւանդութեան պատճառով ազատ համարուեց յաջորդական պաշտօնից:

Թաւրիզից Մայր Աթոռ վերադարձաւ Առաջնորդական փոխանորդ տ. Մեօրոպ վարդապետ Մագսուտեանը, որը վերջնականապէս թողել է փոխանորդութեան պաշտօնը: Այսպիսով Ատրպատականի թեմը մնաց ոչ միայն առանց առաջնորդի, այլ և առանց փոխանորդի:

Դեկտեմբերի 29-ին Կարսում տեղի ունեցաւ տեղական հայոց դպրոցների բացման հանդէսը խօսւն բազմութեան ներկայութեամբ: Հանդիսի ժամանակ խօսեց տեղական Փոխանորդ տ. Մամբէ վարդապետը դպրոցի նշանակութեան մասին, օրիորդ Մելիք Յովսէփեանը՝ կնոջ դերը հասարակական զարգացման գործում. ապա կարգացին ոտանաւորներ, երգուեցին խմբական քառաձայն երգեր, որից յետոյ խօսեց Եղիշէ վարդապետը և նկարագրեց այն դժուարութիւնները, որոնք յարուցուեցին այդ հիմնարկութեան կառուցման նախ ժողովրդից մի քանի անհատների և ապա բիւրօկրատիական կառավարութեան ներկայացուցիչների կողմից, բայց որոնք ջախջախուեցին խոր հաւատոյ և արդարութեան առաջ: Այժմս Կարսի դպրոցը միակն է Կովկասի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների շարքում թէ աշակերտների քանակութեամբ, որոնց թիւը հասնում է 836-ի և թէ բիւզժէյով՝ 17,000 ուրլի. ընդունելով, որ պետական հինգ դպրոցների և հայ կաթողիկոսեց եկեղ. ծխական դպրոցումն էլ կլինի ժող 900 աշակերտ-աշակերտուհի, կըստանանք 1736 հոգի, որ մի պատկառելի թիւ է Կարսի պէս քաղաքի համար և առանց գանձարանի վրայ ծանրանալու, համարեա իրականացնում է պարտադիր ուսման գաղափարը: Կարսի երեխաններից հազիւ դուրսը մնացած լինեն երկու հարիւր հոգի, որոնց կրթութեան գործը լաւ կլինի, որ քաղաքն առնի իւր վրայ: Հանդիսի վերջում խօսեց դպրոցի տեսուչ պ. Ստեփանեանը, որը համառօտ հաշիւ տուաւ ուսուցչական խմբի և նրա գործունէութեան մասին: Հանդէսը փակուեց

պահպանելով, իսկ երեկոցեան ի պատիւ դպրոցի և կրթ-  
պահների կառուցման նախաձեռնող և մեծ ներդրութիւն-  
ներով գլուխ հանող Եղիշէ վարդապետի տեղի ունեցաւ  
ընթրիք, որին ներկայ էր քաղաքի երիտասարդութիւնը,  
իսկ յունվարի 8-ին քաղաքացիք կրկին ճաշ<sup>Բ</sup> տուին տեղա-  
կան կուրբի դահլիճում, որտեղ ի միջի այլոց հաւաքուեց  
վաթսուն և ութ ռուբլի յօգուտ թուրք հայկական կոտո-  
րածների արկածեալների: Պէտք է նկատել, որ ժողովուրդը  
սերտ կպած է իւր դպրոցին և յոյս ունի վերածելու  
այն չորս դասարանեան գիւղատնտեսական տնայնագոր-  
ծական դպրոցի:

Ռուսացիչ.

## ԱՅՈՒՆԵՆԴԱՆՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

### Պրաւօսլաւ եկեղեցի ռուսաց

Церк. Вѣстникъ-ի № 45-ում ապուած է մի յօդուած «Աստուածապաշտական լեզու» վերնագրով, որի մէջ ի մէջի այլոց յօդուածագիրն ասում է հետևեալը.—

Ծանր դրութեան մէջն է պրաւօսլաւ քահանան ժամաստ-  
ցութեան միջոցին: Նա համազուած է, որ որչափ էլ աշխատի,  
չի կարող սգևորել աղօթողներին այն վսեմ մտքերով, որոնք  
կազմում են եկեղեցական աղօթքների և երգերի ըովանդակու-  
թիւնը, բայց հնարաւորութիւն չունի իւր դարդին դարման  
գտնելու: Մեր աղօթքներն ու եկեղեցական երգերն այնպէս են  
կազմուած, որ մի միայն խնամքով մեկնաբանելուց յետոյ կարող  
են հասնանալի դառնալ: Ճիշտ է, քահանան կարող էր  
բացատրել անհասկանալի բառերն ու արտայայտութիւնները,  
բայց նա այդպիսով ստիպուած կլինէր ժամերգութիւն կատա-  
րել երկու լեզուով: Աւելի բարւոք չէ հետզհետէ պարզ ձև տալ  
ժամակարգութեանը, քան բարդել այն մեկնաբանութիւններ  
աւելացնելով: Մեր ժամերգութեանց ժամանակ կարգապահու-